

**ԿՈՆՎԵՆՑԻԱ**  
**ԵՎՐՈՊԱՅԻ ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՄԱՍԻՆ**

**Ներածություն**

Եվրոպայի խորհրդի Անդամ պետությունները և սույն փաստաթուղթն ստորագրող մյուս Կողմերը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհուրդը նպատակ ունի իր անդամների միջև հասնելու առավել սերտ միասնության,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի՝ բնապահպանության ոլորտում այլ պետությունների հետ համագործակցելու ցանկությունը,

գիտակցելով, որ վայրի ֆլորան և ֆաունան հանդիսանում են գեղագիտական, գիտական, մշակութային, ժամանցային, տնտեսական, ինչպես նաև բնորոշ արժեքների բնական ժառանգություն, որն անհրաժեշտ է պահպանել և փոխանցել գալիք սերունդներին,

գիտակցելով վայրի ֆլորայի և ֆաունայի էական դերը կենսաբանական հավասարակշռության պահպանման գործում,

նկատի առնելով, որ վայրի ֆլորայի ու ֆաունայի բազմաթիվ տեսակներ զգալիորեն նվազում են, և դրանց որոշ տեսակներ կանգնած են անհետացման սպառնալիքի առջև,

գիտենալով, որ բնական միջավայրի պահպանությունն իրենից ներկայացնում է վայրի ֆլորայի ու ֆաունայի պաշտպանության և պահպանման կենսական տարր,

գիտակցելով, որ կառավարություններն իրենց ազգային ծրագրերում և նպատակներում պետք է հաշվի առնեն վայրի ֆլորայի ու ֆաունայի պահպանությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտ է հաստատել միջազգային համագործակցություն մասնավորապես չվող տեսակների պահպանության նպատակով,

հաշվի առնելով համատեղ գործողությունների վերաբերյալ կառավարությունների և միջազգային կառույցների կողմից կատարվող լայնատարած հարցումները, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ Մարդու շրջակա միջավայրի հարցերին նվիրված՝ 1972թ. խորհրդածողովի և Եվրոպայի խորհրդի խորհրդատվական վեհաժողովի շրջանակներում արտահայտված հարցումները,

ցանկություն ունենալով վայրի բնության պահպանության ոլորտում հետևել մասնավորապես Շրջակա միջավայրի հարցերին նվիրված նախարարական Երկրորդ եվրոպական խորհրդածողովի 2-րդ Բանաձևի հանձնարարականներին,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ  
Հոդված 1

1. Սույն Կոնվենցիայի նպատակն է ապահովել վայրի ֆլորայի ու ֆաունայի և նրանց բնական միջավայրերի պահպանությունը՝ առանձնակիորեն կարևորելով այն տեսակները և բնական միջավայրերը, որոնց պահպանման համար անհրաժեշտ է համագործակցություն մի քանի պետությունների կողմից, ինչպես նաև՝ խթանել նման համագործակցությունը:

2. Առանձնակիորեն կարևորվում են վտանգված և խոցելի, այդ թվում՝ վտանգված և խոցելի չվող տեսակները:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ վայրի ֆլորայի ու ֆաունայի պոպուլյացիաները հատկապես բնապահպանական, գիտական և մշակութային պահանջներին համապատասխանող մակարդակի վրա պահպանելու կամ դրանք այդ մակարդակին հարմարեցնելու համար՝ մինչև ժամանակ հաշվի առնելով վտանգված ենթատեսակների, տեսակների կամ տարատեսակների տնտեսական և հանգստի հետ կապված կարիքներն ու պահանջները տեղական և տարածաշրջանային մասշտաբով:

Հոդված 3

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի քայլեր վայրի ֆլորայի, վայրի ֆաունայի և բնական միջավայրերի պահպանությանն ուղղված ազգային քաղաքականությունը խթանելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով վտանգված և խոցելի, հատկապես տեղական տեսակներին և վտանգված բնական միջավայրերին՝ համաձայն սույն Կոնվենցիայի դրույթների:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր քաղաքականությունը ծրագրելիս ու մշակելիս, ինչպես նաև ադտոտման դեմ ուղղված իր միջոցառումներում պարտավորվում է հաշվի առնել վայրի ֆլորայի և ֆաունայի պահպանության հարցերը:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նպաստի լուսավորչական աշխատանքների կազմակերպմանը և տարածի ընդհանուր տեղեկություն վայրի ֆլորայի ու ֆաունայի տեսակների և բնական միջավայրերի պահպանման անհրաժեշտության վերաբերյալ:

Գլուխ II. Բնական միջավայրերի պահպանություն  
Հոդված 4

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ վայրի ֆլորայի ու ֆաունայի

տեսակների բնական միջավայրերի, հատկապես 1-ին և 2-րդ հավելվածներում նշված տեսակների, և վտանգված բնական միջավայրերի պահպանությունն ապահովելու նպատակով:

2. Պայմանավորվող կողմերն իրենց քաղաքականությունը ծրագրելիս ու մշակելիս պետք է հաշվի առնեն նախորդ կետում սահմանված՝ պաշտպանության ենթակա տարածքների պահպանման պահանջները՝ նման տարածքների վատթարացումից խուսափելու կամ այն հնարավորինս նվազեցնելու համար:

3. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են հատուկ ուշադրություն դարձնել 2-րդ և 3-րդ հավելվածներում նշված չվող տեսակների համար կարևոր և, ըստ միգրացիայի ուղիների, համապատասխանորեն տեղաբաշխված տարածքների պահպանությանը: Նման տարածքներին են պատկանում ձմեռելու, հանգրվանելու, կերակուր հայթայթելու, բազմացման և մագաթափման համար նախատեսված տարածքները:

4. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են պատշաճ կերպով համակարգել իրենց ջանքերը սույն հոդվածում հիշատակված բնական միջավայրերի պահպանության համար, երբ դրանք գտնվում են սահմանամերձ գոտիներում:

### Գլուխ III. Տեսակների պահպանությունը Հոդված 5

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ 1-ին հավելվածում նշված վայրի ֆլորայի տեսակների հատուկ պահպանությունն ապահովելու նպատակով: Պետք է արգելվի նման բույսերը դիտավորությամբ պոկելը, հավաքելը, կտրելը կամ արմատախիլ անելը: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է հարկ եղած դեպքում արգելի այդ տեսակների ձեռքբերումը կամ վաճառքը:

### Հոդված 6

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ 2-րդ հավելվածում նշված վայրի ֆաունայի տեսակների հատուկ պահպանությունն ապահովելու նպատակով: Նշված տեսակների նկատմամբ պետք է մասնավորապես արգելվեն հետևյալ գործողությունները.

ա. կանխամտածված կերպով ապօրինի հայթայթման, պահելու և դիտավորյալ սպանության բոլոր ձևերը,

բ. կանխամտածված կերպով բազմացման կամ հանգստի տեղանքներին վնաս հասցնելը կամ դրանք ավերելը,

գ. վայրի ֆաունային կանխամտածված կերպով անհանգստություն պատճառելը հատկապես բազմացման, աճեցման և ձմեռային քնի շրջանում՝ այնքանով, որքանով անհանգստություն պատճառելն էական կլինի սույն Կոնվենցիայի նպատակների առնչությամբ,

դ. կանխամտածված կերպով ձվերը ոչնչացնելը կամ դրանք վայրի բնությունից հավաքելը կամ պահելը նույնիսկ դատարկ վիճակում,

ե. կենդանի կամ մահացած վիճակում նշված կենդանիների, այդ թվում նաև՝ խրտվիլակների և նրանց հեշտությամբ ճանաչվող մասի ձեռքբերումը կամ ներքին առևտուրը այն դեպքերում, երբ դա կնպաստեր սույն հոդվածի դրույթների արդյունավետությանը:

## Հոդված 7

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ 3-րդ հավելվածում նշված վայրի ֆաունայի տեսակների պահպանությունն ապահովելու նպատակով:

2. 3-րդ հավելվածում նշված վայրի ֆաունայի տեսակների ցանկացած օգտագործում պետք է կարգավորվի պոպուլյացիաներին վտանգից զերծ պահելու նպատակով՝ հաշվի առնելով 2-րդ հոդվածի պահանջները:

3. Ձեռնարկվող միջոցները պետք է ներառեն.

ա. օգտագործումը կարգավորող արգելման սեզոններ և/կամ այլ ընթացակարգեր,

բ. ժամանակավոր կամ տեղական օգտագործման արգելում՝ պոպուլյացիայի բավարար քանակությունը վերականգնելու նպատակով,

գ. կենդանի և մահացած վայրի կենդանիների վաճառքի, վաճառքի նպատակներով պահման, տեղափոխման կամ առաջարկման ընթացակարգերի համապատասխան կարգավորում:

## Հոդված 8

Սույն Կոնվենցիայի 3-րդ հավելվածում նշված վայրի ֆաունայի տեսակների ապօրինի որսի և սպանության հետ կապված դեպքերում, ինչպես նաև, 9-րդ հոդվածի համաձայն, 2-րդ հավելվածում հիշատակված տեսակների նկատմամբ բացառությունների կիրառման դեպքում Պայմանավորվող կողմերը պետք է միանշանակորեն արգելեն որսի և սպանության նպատակով օգտագործվող բոլոր միջոցների, ինչպես նաև տվյալ վայրում տեսակների պոպուլյացիաների անհետացմանը նպաստող կամ նրանց լուրջ վնաս հասցնող միջոցների օգտագործումը: Սույն դրույթը մասնավորապես վերաբերում է 4-րդ հավելվածում նշված միջոցներին:

## Հոդված 9

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դիմել բացառությունների՝ կապված 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված դրույթների կիրառման, ինչպես նաև 8-րդ հոդվածում հիշատակված միջոցների օգտագործման արգելման հետ, եթե առկա չէ այլ բավարար լուծում, և եթե այդ բացառությունը վտանգ չի ներկայացնի տվյալ պոպուլյացիայի գոյատևման համար.

- ֆլորայի և ֆաունայի պահպանության համար,
- հացահատիկային կուլտուրաներին, ընտանի կենդանիներին, անտառին, ձկնատեսակներին և տնտեսության այլ ձևերին հասցվելիք լուրջ վնասը կանխելու նպատակով,
- ելնելով հասարակության առողջության և անվտանգության, օդի անվտանգության և այլ առաջնահերթ հանրային շահերից,
- հետազոտական և կրթական աշխատանքների, պոպուլյացիայի վերականգնման, վերարտադրման և բազմացման նպատակով,
- խիստ հսկողության պայմաններում ընտրովի կարգով և սահմանափակ քանակությամբ թույլատրել որոշ վայրի բույսեր հավաքելը, առանձին վայրի կենդանիներ պահելը կամ այլ խելամիտ նպատակներով դրանք օգտագործելը:

2. Պայմանավորվող կողմերը պետք է Մշտական կոմիտեին յուրաքանչյուր 2 տարին մեկ ներկայացնեն հաշվետվություններ նախորդ կետի համաձայն արված բացառությունների վերաբերյալ: Այդ հաշվետվություններում պետք է հիշատակված լինեն.

- բացառությունների ենթակա կամ նախկինում բացառությունների առարկա հանդիսացող պոպուլյացիաները, հնարավորության դեպքում՝ նաև ներգրավված նմուշների քանակը,
- սպանության կամ որսի համար թույլատրված միջոցները,
- ռիսկային այն պայմանները և ժամանակային ու տեղային այն հանգամանքները, որոնց դեպքում շնորհվել են բացառությունները,
- պետական այն մարմինը, որը լիազորված է հայտարարելու, որ այս պայմանները կատարված են, ինչպես նաև՝ որոշումներ կայացնելու օգտագործման համար թույլատրվելիք միջոցների, դրանց սահմանափակումների և դրանք իրականացնելու համար համապատասխան ցուցումներ ունեցող անձանց վերաբերյալ,
- վերահսկումն իրականացնելու նպատակով ներգրավված միջոցները:

#### Գլուխ IV. Հատուկ դրույթներ չվող տեսակների պահպանության համար

##### Հոդված 10

1. Պայմանավորվող կողմերը, ի լրումն 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներում նշված միջոցների, պարտավորվում են համակարգել իրենց ջանքերը 2-րդ և 3-րդ հավելվածներում նշված այն չվող տեսակների պահպանության համար, որոնց տարաբնակեցման տիրույթը հասնում է դեպի իրենց տարածքները:

2. Պայմանավորվող կողմերը պետք է ձեռնարկեն միջոցներ՝ երաշխավորելու համար, որ արգելման սեզոնները և/կամ 7-րդ հոդվածի 3.ա կետով սահմանված օգտագործումը կարգավորող մյուս ընթացակարգերը լինեն համարժեք և բաշխվեն համապատասխանաբար՝ 3-րդ հավելվածում նշված չվող տեսակների պահանջներին համապատասխանելու համար:

#### Գլուխ V. Լրացուցիչ դրույթներ

##### Հոդված 11

1. Սույն Կոնվենցիայի դրույթներն իրականացնելիս Պայմանավորվող կողմերը պարտավորվում են.

ա. համագործակցել ըստ անհրաժեշտության և հատկապես այն դեպքերում, երբ դա կբարձրացնի սույն Կոնվենցիայի հոդվածներով նախատեսվող միջոցների արդյունավետությունը,

բ. խրախուսել և համակարգել սույն Կոնվենցիայի նպատակներին առնչվող հետազոտական աշխատանքները:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պարտավորվում է.

ա. խրախուսել վայրի ֆլորայի ու ֆաունայի տեղական տեսակների վերարտադրությունը, երբ դա նպաստում է վտանգված տեսակների պահպանությանը, եթե հետազոտությունն առաջին հերթին իրականացվում է այլ Պայմանավորվող կողմերի՝ նման վերարտադրության արդյունավետությունն ու թույլատրելիությունը հաստատելու փորձի լույսի ներքո,

բ. խստորեն վերահսկել ոչ տեղական տեսակների ներմուծումը:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է Մշտական կոմիտեին տեղեկացնի իր տարածքում լիարժեք պաշտպանություն ստացող և 1-ին ու 2-րդ հավելվածներում չընդգրկված տեսակների մասին:

##### Հոդված 12

Պայմանավորվող կողմերը կարող են ընդունել վայրի ֆլորայի ու ֆաունայի և նրանց բնական միջավայրերի պահպանությանն ուղղված ավելի խիստ միջոցներ, քան սահմանված են Կոնվենցիայով:

## Գլուխ VI. Մշտական կոմիտե

### Հոդված 13

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով պետք է հիմնվի Մշտական կոմիտե:

2. Մշտական կոմիտեում յուրաքանչյուր Կողմի կարող է ներկայացնել մի քանի պատվիրակ: Յուրաքանչյուր պատվիրակություն կունենա մեկ ձայնի իրավունք: Եվրոպական տնտեսական համայնքը իր լիազորությունների սահմաններում կօգտվի քվեարկելու իր իրավունքից. ընդ որում՝ քվեների թիվը պետք է հավասար լինի սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ հանդիսացող Անդամ պետությունների թվին:

Եվրոպական տնտեսական համայնքը չի կարող օգտվել քվեարկելու իր իրավունքից, եթե շահագրգիռ Անդամ պետություններն օգտվում են իրենց իրավունքից. և՛ հակառակը:

3. Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր Անդամ պետություն, որը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ, կարող է Հանձնաժողովում ներկայացված լինել որպես դիտորդ:

Մշտական կոմիտեն միաձայն որոշումով կարող է իր հանդիպումներից որևէ մեկին որպես դիտորդի հրավիրել Եվրոպայի խորհրդի Անդամ չհանդիսացող յուրաքանչյուր պետության, որը սույն Կոնվենցիայի Կողմ չէ:

Վայրի ֆաունայի ու ֆլորայի և նրանց բնական միջավայրերի պահպանության ու կառավարման համար տեխնիկական հնարավորություններ ունեցող ցանկացած մարմին կամ կառույց, որը պատկանում է հետևյալ խմբերից որևէ մեկին.

ա. միջազգային կառավարական կամ ոչ կառավարական կառույցներ կամ մարմիններ, ինչպես նաև ազգային կառավարական կառույցներ կամ մարմիններ,

բ. համապատասխան պետության կողմից հիշյալ նպատակով հավանության արժանացված ազգային ոչ կառավարական կառույցները կամ մարմինները կարող են Հանձնաժողովի հանդիպումից առնվազն 3 ամիս առաջ տեղեկացնել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին այդ հանդիպմանը որպես դիտորդ մասնակցելու իրենց ցանկության մասին: Նրանց մասնակցությունը թույլատրվում է, եթե հանդիպումից առնվազն մեկ ամիս առաջ Պայմանավորվող կողմերի մեկ երրորդը Գլխավոր քարտուղարին չի տեղեկացնում իր առարկության մասին:

4. Մշտական կոմիտեն պետք է գումարվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից: Հանձնաժողովի առաջին հանդիպումը պետք է անցկացվի Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Հետագայում այն

պետք է գումարվի առնվազն երկու տարին մեկ անգամ, ինչպես նաև՝ ցանկացած ժամանակ, երբ դա պահանջում է Պայմանավորվող կողմերի մեծամասնությունը:

5. Պայմանավորվող կողմերի մեծամասնությունը պետք է ապահովի քվորում Մշտական կոմիտեի հանդիպումն անցկացնելու համար:

6. Ելնելով սույն Կոնվենցիայի դրույթներից՝ Մշտական կոմիտեն պետք է մշակի իր սեփական ընթացակարգային նորմերը:

#### Հոդված 14

1. Մշտական կոմիտեն պետք է պատասխանատու լինի սույն Կոնվենցիայի կիրառմանը հետևելու համար: Մասնավորապես նա կարող է.

- վերանայել սույն Կոնվենցիայի դրույթները, այդ թվում՝ դրա հավելվածները, և ուսումնասիրել յուրաքանչյուր անհրաժեշտ փոփոխություն,
- Պայմանավորվող կողմերին տալ հանձնարարականներ սույն Կոնվենցիայի նպատակներով ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ,
- առաջարկել համապատասխան միջոցներ՝ սույն Կոնվենցիայի շրջանակներում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հանրությանը տեղեկացված պահելու նպատակով,
- Նախարարների կոմիտեին տալ հանձնարարականներ Եվրոպայի խորհրդի Անդամ չհանդիսացող պետություններին սույն Կոնվենցիային միանալու հրավերների վերաբերյալ,
- ներկայացնել ցանկացած առաջարկություն սույն Կոնվենցիայի արդյունավետությունը բարձրացնելու, այդ թվում՝ Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետությունների հետ համաձայնագրեր կնքելու նպատակով: Այդ առաջարկությունները կբարձրացնեն տեսակների կամ տեսակների խմբերի պահպանության արդյունավետությունը:

2. Իր գործառույթները հեշտացնելու նպատակով Մշտական կոմիտեն կարող է իր սեփական նախաձեռնությամբ կազմակերպել փորձագետների խմբերի հանդիպումներ:

#### Հոդված 15

Յուրաքանչյուր հանդիպումից հետո Մշտական կոմիտեն պետք է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին ներկայացնի հաշվետվություն իր աշխատանքի, ինչպես նաև Կոնվենցիայի գործարկման վերաբերյալ:



## Գլուխ VII. Փոփոխություններ

### Հոդված 16

1. Սույն Կոնվենցիայի հոդվածներում Պայմանավորվող կողմի կամ Նախարարների կոմիտեի կողմից առաջարկվող ցանկացած փոփոխություն պետք է փոխանցվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին և նրա կողմից Մշտական կոմիտեի հանդիպումից առնվազն երկու ամիս առաջ ուղարկվի Եվրոպայի խորհրդի Անդամ պետություններին, պայմանագիրը ստորագրող յուրաքանչյուր կողմի, Պայմանավորվող կողմի, 19-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ սույն Կոնվենցիան ստորագրելու համար հրավիրված յուրաքանչյուր պետության և, 20-րդ հոդվածի դրույթների համաձայն, նրան միանալու նպատակով հրավիրված ցանկացած պետության:

2. Նախորդ կետի համաձայն առաջարկված ցանկացած փոփոխություն պետք է ուսումնասիրվի Մշտական կոմիտեի կողմից, որը.

ա. 1-ից 12-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու համար պետք է ձայների երեք քառորդ մեծամասնությամբ ընդունված տեքստը հանձնի Պայմանավորվող կողմերին՝ ընդունելու նպատակով,

բ. 13-ից 24-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու համար պետք է ձայների երեք քառորդ մեծամասնությամբ ընդունված տեքստը ներկայացվի Նախարարների կոմիտեին՝ հավանություն ստանալու նպատակով: Հավանություն ստանալուց հետո տեքստը պետք է փոխանցվի Պայմանավորվող կողմերին՝ ընդունելու նպատակով:

3. Փոփոխությունն ուժի մեջ է մտնում բոլոր Պայմանավորվող կողմերի՝ այն ընդունելու մասին Գլխավոր քարտուղարին տեղեկացնելու երեսուներորդ օրը:

4. Սույն հոդվածի 1-ին, 2.ա և 3-րդ կետերի դրույթները կկիրառվեն սույն Կոնվենցիայի նոր հավելվածների ընդունման նկատմամբ:

### Հոդված 17

1. Սույն Կոնվենցիայի հավելվածներում Պայմանավորվող կողմերի կամ Նախարարների կոմիտեի կողմից առաջարկվող ցանկացած փոփոխություն պետք է փոխանցվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին և նրա կողմից Մշտական կոմիտեի հանդիպումից առնվազն 2 ամիս առաջ ուղարկվի Եվրոպայի խորհրդի Անդամ պետություններին, պայմանագիրը ստորագրող յուրաքանչյուր կողմի, Պայմանավորվող յուրաքանչյուր կողմի, 19-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ սույն Կոնվենցիան ստորագրելու հրավիրված յուրաքանչյուր պետության և, 20-րդ հոդվածի դրույթների համաձայն, նրան միանալու հրավիրված յուրաքանչյուր պետության:

2. Նախորդ կետի դրույթներով առաջարկված ցանկացած փոփոխություն պետք է ուսումնասիրվի Մշտական կոմիտեի կողմից, որը կարող է ընդունել այն Պայմանավորվող կողմերի ձայների 2/3 մեծամասնությամբ: Ընդունված տեքստը պետք է փոխանցվի Պայմանավորվող կողմերին:

3. Մշտական կոմիտեի կողմից ընդունվելուց 3 ամիս անց, եթե Պայմանավորվող կողմերի մեկ երրորդը չի ներկայացնում որևէ առարկություն, ցանկացած փոփոխություն պետք է ուժի մեջ մտնի Պայմանավորվող այն կողմերի համար, որոնք առարկություններ չեն ներկայացրել:

## Գլուխ VIII. Վեճերի կարգավորում

### Հոդված 18

1. Մշտական կոմիտեն պետք է կիրառի առավելագույն ջանքեր՝ սույն Կոնվենցիայի իրականացումից բխող յուրաքանչյուր դժվարություն բարեկամաբար կարգավորելու նպատակով:

2. Սույն Կոնվենցիայի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող՝ Պայմանավորվող կողմերի միջև ծագած ցանկացած վեճ, որը չի լուծվել նախորդ կետի դրույթների հիման վրա կամ շահագրգիռ կողմերի միջև բանակցությունների միջոցով, Կողմերի խնդրանքով ներկայացվում է արբիտրաժային դատարան, եթե նշված կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն: Յուրաքանչյուր Կողմ պետք է նշանակի մեկ միջնորդ դատավոր, և այդ երկու միջնորդ դատավորները պետք է նշանակեն երրորդ միջնորդ դատավորին: Սույն հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն, եթե Կողմերից մեկը արբիտրաժի հայտ ներկայացնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, չի նշանակել իր միջնորդ դատավորին, ապա վերջինս պետք է նշանակվի մյուս Կողմի խնդրանքով՝ Մարդու իրավունքի եվրոպական դատարանի նախագահի կողմից՝ հետագա 3 ամիսների ընթացքում: Նույն ընթացակարգը կիրառվում է այն դեպքերում, երբ առաջին երկու դատավորների նշանակմանը հաջորդող երեք ամիսների ընթացքում միջնորդ դատավորները ի վիճակի չեն համաձայնության գալու երրորդ դատավորի նշանակման շուրջ:

3. Եթե առկա է վեճ երկու Պայմանավորվող կողմերի միջև, որոնցից մեկը Անդամ է Եվրոպական տնտեսական համայնքին, որն ինքնին հանդիսանում է Պայմանավորվող կողմ, մյուս Պայմանավորվող կողմը արբիտրաժի խնդրանքը հասցեագրում է ինչպես այդ Պայմանավորվող կողմին, այնպես էլ համայնքին: Եվ Պայմանավորվող կողմը, և համայնքը հայտն ստանալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, համատեղ պետք է ծանուցեն, թե իրենցից որ մեկը կամ արդյոք իրենք միասին կհանդիսանան վեճի կողմ: Նշված ժամկետում նման ծանուցման բացակայության դեպքում Անդամ պետությունը և համայնքը պետք է դիտարկվեն որպես վեճի միևնույն կողմ արբիտրաժային դատարանի սահմանադրությունը և ընթացակարգը ղեկավարող դրույթների կիրառման նպատակով: Նույնը պետք է կիրառվի այն դեպքում, երբ Անդամ պետությունը և համայնքը համատեղ ներկայանում են որպես վեճի մեկ կողմ:

4. Արբիտրաժային դատարանը պետք է մշակի իր սեփական ընթացակարգային նորմերը: Նրա որոշումները պետք է կայացվեն ձայների մեծամասնությամբ: Արբիտրաժային դատարանի որոշումը պետք է լինի վերջնական և պարտադիր:

5. Վեճի մասնակից յուրաքանչյուր Կողմ պետք է ստանձնի իր նշանակած միջնորդ դատավորի ծախսերը, իսկ երրորդ միջնորդ դատավորի ծախսերը, ինչպես նաև արբիտրաժի ընթացքում առաջացող այլ ծախսեր, պետք է հավասարաչափ բաշխվեն Կողմերի միջև:

## Գլուխ IX. Եզրափակիչ դրույթներ

### Հոդված 19

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի խորհրդի Անդամ պետությունների, ինչպես նաև դրա մշակմանը մասնակցած՝ Անդամ չհանդիսացող պետությունների և Եվրոպական տնտեսական համայնքի առջև:

Մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթիվը այն պետք է բաց լինի ստորագրման համար Նախարարների կոմիտեի կողմից հրավիրված յուրաքանչյուր պետության առջև:

2. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հինգ պետությունների (որոնցից առնվազն չորսը Եվրոպայի խորհրդի Անդամներ են) կողմից նախորդ կետի դրույթների համաձայն Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին համաձայնություն հայտնելուն հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

3. Յուրաքանչյուր ստորագրող պետության կամ Եվրոպական տնտեսական համայնքի համար, որոնք հետագայում արտահայտում են Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունը, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուն հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

### Հոդված 20

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն Պայմանավորվող կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է Կոնվենցիային միանալու համար հրավիրել Խորհրդի Անդամ չհանդիսացող ցանկացած պետության, որը, հրավիրված լինելով ստորագրելու այն, համաձայն 19-րդ հոդվածով սահմանված դրույթների, դեռևս չի արել դա, ինչպես նաև Անդամ չհանդիսացող ցանկացած այլ պետության:

2. Յուրաքանչյուր միացող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միանալու մասին փաստաթուղթն ի պահ

հանձնելուն հաջորդող եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

#### Հոդված 21

1. Ստորագրման ժամանակ կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս յուրաքանչյուր պետություն կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ պետք է կիրառվի սույն Կոնվենցիան:

2. Վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կամ դրանից հետո յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով ընդլայնել սույն Կոնվենցիայի կիրառումը ցանկացած այլ տարածքի նկատմամբ, որը նշված է հայտարարության մեջ, և որի միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է, կամ որի անունից լիազորված է՝ ստանձնելու պարտավորություններ:

3. Նախորդ կետի համաձայն արված ցանկացած հայտարարություն՝ կապված դրանում նշված ցանկացած տարածքի հետ, կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հետ վերցնելն ուժի մեջ կմտնի ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալուն հաջորդող վեցամսյա ժամկետը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

#### Հոդված 22

1. Ստորագրման ժամանակ կամ վավերագիրն ընդունելիս, հաստատելիս կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս յուրաքանչյուր պետություն կարող է կատարել մեկ կամ մի քանի վերապահում 1-ից 3-րդ հավելվածներով սահմանված որոշակի տեսակների և/կամ տվյալ վերապահման կամ վերապահումների մեջ նշված հատուկ տեսակների համար, ինչպես նաև 4-րդ հավելվածում նշված՝ սպանելու, որսի և օգտագործման որոշակի միջոցների և մեթոդների վերաբերյալ: Ոչ մի ընդհանուր բնույթի վերապահում չի թույլատրվում:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որն ընդլայնում է սույն Կոնվենցիայի կիրառումը 21-րդ հոդվածի 2-րդ կետում նշված տարածքներին վերաբերող հայտարարությամբ, կարող է կատարել մեկ կամ ավելի վերապահում՝ ելնելով նախորդ կետի դրույթներից:

3. Ոչ մի այլ վերապահում չի թույլատրվում:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով վերապահում արած ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն հետ վերցնել դրանք Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ:

#### Հոդված 23

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

2. Կոնվենցիայի նման դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալուն հաջորդող վեցամսյա ժամկետը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

#### Հոդված 24

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է տեղեկացնի Եվրոպայի խորհրդի Անդամ պետություններին, ցանկացած ստորագրող պետության, Եվրոպական տնտեսական համայնքին, եթե վերջինս հանդիսանում է սույն Կոնվենցիայի Անդամ, ինչպես նաև յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի.

ա. յուրաքանչյուր ստորագրման,

բ. յուրաքանչյուր վավերագիր, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթ ի պահ հանձնելու,

գ. 19-րդ և 20-րդ հոդվածների համաձայն սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ցանկացած ամսաթվի,

դ. 13-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն հաղորդված ցանկացած տեղեկատվության,

ե. 15-րդ հոդվածի դրույթների համաձայն ներկայացված ցանկացած հաշվետվության,

զ. 16-րդ և 17-րդ հոդվածների համաձայն ընդունված յուրաքանչյուր փոփոխության կամ նոր հավելվածի և յուրաքանչյուր փոփոխության կամ նոր հավելվածի ուժի մեջ մտնելու ժամկետի,

է. 21-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների համաձայն կազմված ցանկացած հայտարարության,

ը. 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն արված ցանկացած վերապահման,

թ. 22-րդ հոդված 4-րդ կետի համաձայն յուրաքանչյուր վերապահում հետ վերցնելու,

ժ. 23-րդ հոդվածի համաձայն տրվող ցանկացած ծանուցման և չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ժամկետի մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, ունենալով պատշաճ լիազորություններ, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Բեռնում 1979թ. սեպտեմբերի 19-ին, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են, կազմված մեկ օրինակով, որն ի պահ է հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է հավաստված օրինակները փոխանցի Եվրոպայի խորհրդի Անդամ պետություններին, յուրաքանչյուր ստորագրող պետության, Եվրոպական տնտեսական միությանը, եթե վերջինս հանդիսանում է սույն Կոնվենցիան ստորագրող Կողմ, Կոնվենցիան ստորագրելու կամ դրան միանալու նպատակով հրավիրված յուրաքանչյուր պետության:

***Կոնվենցիան ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2008թ-ի օգոստոսի 1-ից:***